ISSN 1829-0361

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

1(11)

HISTORY MUSEUM OF ARMENIA

PROCEEDINGS
OF THE HISTORY MUSEUM OF ARMENIA

№ 1(11)

МУЗЕЙ ИСТОРИИ АРМЕНИИ

ТРУДЫ МУЗЕЯ ИСТОРИИ АРМЕНИИ

№ 1(11)

YEREVAN 2023 ЕРЕВАН

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ

№ 1(11)

ԵՐԵՎԱՆ 2023

Տպագրվում է Հայաստանի պատմության թանգարանի գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակվում է 1948 թվականից

Խմբագրական խորհուրդ՝

Նժդեհ Երանյան. *պ. գ. թ. – նախագահ,*
Հայկ Նազարյան, *պ. գ. թ. – պատասխանատու քարտուղար*
Արա Սանճեան, *PhD* (*ԱՄՆ*), Արսեն Բոբոխյան, *պ. գ. թ.*,
Համլետ Պետրոսյան, *պ. գ. դ., պրոֆեսոր*, Համո Սուքիասյան,
պ. գ. թ., դոցենտ, Հարություն Մարության, *պ. գ. դ.*, Հռիփսիմե
Պիկիչյան, *պ. գ. թ., դոցենտ*, Հրաչ Չիլինկիրեան, *PhD* (*Մեծ
Բրիտանիա*), Մխիթար Գաբրիելյան, *պ. գ. թ., դոցենտ*,
Պավել Ավետիսյան, *պ. գ. դ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ*,
Ռոբերտո Դան, *PhD* (*Իտալիա*), Ռուբեն Վարդանյան, *պ. գ. թ.*,
Տորք Դալալյան, *բ. գ. թ.*

ISSN 1829–0361

© Հայաստանի պատմության թանգարան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Անանարիկա Մ. Բոնֆանտի, Ռոբերտո Դան

Ասորեստանյան տարրերը բարձրավանդակի երկաթի դարի մշակույթում. Եղեգնաձորի գանձի զարդարված բրոնզե թասը (անգլ.) 8

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՂԲՅՈՒՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Արմեն Բաղալյան

ՀԿ(բ)Կ կենտկոմի նախագահության և քարտուղարության որոշումները ԱՄԴԽՀ և ԽՍՀՄ կազմավորման մասին (1921–1922 թթ.) 20

Մեղա Գալստյան

Հայաստանի Առաջին Հանրապետության սոցիալ-տնտեսական դրությունը 1918–1920 թվականներին (ըստ ՀՊԹ-ի նյութերի) 43

Անուշ Հարությունյան

ԼՂԻՄ-ի և Քրդստանի գավառի ժողովրդագրության որոշ հարցեր (1920-ական թթ.). համառոտ ակնարկ (անգլ.) 66

Վանիկ Վիրաբյան

Ամերիկյան գնդապետ Ուիլյամ Հասկելի առաքելությունը Հայաստանի Հանրապետությունում և Անդրկովկասում (1919–1920 թթ.) 78

ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Արտակ Ասատրյան

Պղնձագործությունը Արևմտյան Հայաստանում և Փոքր Ասիայի հայաբնակ վայրերում 19–20-րդ դարասկզբին (պատմաազգագրական ակնարկ) 104

Լիլիա Ավանեսյան

Մ. Դ. Իսաևի «Գորգերի արտադրությունը Անդրկովկասում» գիրքը և խորհրդային գորգարտադրության զարգացման սկիզբը Հայաստանում (ռուս.) 124

Միհիթար Գաբրիելյան

«Ազգ»-ի գիտական ուսումնասիրության բանաձևերը «Ազգագրական հանդես»-ում (առաջին համարի «հրատարակչից» բաժնի քննություն) 138

Ասպոիկ Իսրայելյան

Վասպուրականցի ոսկերիչները (19–20-րդ դդ.) 150

Քաքուշ Մալիասյան

Ջուղայի տարազը (18–20-րդ դդ.) 173

Համլիկ Պետրոսյան
Գորգի վերականգնման սկզբունքները.
միջազգային չափորոշիչներ, հայաստանյան փորձ 182

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Ռոզաննա Ծատուրյան
Չարենցի հուշասրահը Չարենցավանում.
գաղափարախոսությունը և ուրբանիզմը խորհրդային քաղաքում 206

Նելլի Կարապետյան
Անձնական հիշողությունից հանրային հիշողություն.
ՀՊԹ երկու լուսանկար-տոհմածառի մշակութային կենսագրությունը 217

Հայկուհի Մուրադյան, Նժդեհ Երանյան, Համազասպ Աբրահամյան
Ազգային ինքնության կառուցումը և խորհրդային մշակութային
քաղաքականությունը. ըստ Հայաստանի պատմության թանգարանի
որոշ արխիվային նամակների 230

ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐ ԵՎ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐ

Մերի Ավետիսյան
Երևան քաղաքի պատմության թանգարանի սպասքի ցուցադրական
համալիրների դերը մշակութային հաղորդակցության համատեքստում 244

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

Արուսյակ Ղազարյան
Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան.
հայ գրականության և արվեստի շտեմարանը 252

Լիլիա Ավանեսյան
Եվգենյա Գյուզալյան. ընդհատված կենսագրություն 260

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ 263

DOI:10.56653//18290361-2023.11-206

Ռուզաննա Ծատուրյան
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ
ruzantsaturyan@yahoo.com

ՉԱՐԵՆՑԻ ՀՈՒՇԱՍՐԱՀԸ ՉԱՐԵՆՑԱՎԱՆՈՒՄ. ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒՐԲԱՆԻԶՄԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՔԱՂԱՔՈՒՄ*

Հիմնաբառեր. Չարենցավան, Չարենց, խորհրդային մշակույթ, հիշողություն, մշակութային քաղաքականություն, ուրբանիզմ, համայնքային թանգարան:

Ներածություն

Մշակութային լանդշաֆտը այն մետաֆորիկ լեզուն է, որի միջոցով արտահայտվում են իշխանություն, հույսեր և սպասելիքներ: Հատկապես գաղափարախոսական և ոչ ժողովրդավարական համակարգերում այս միջավայրերը կապվում են իշխանության պատկերացումների և իշխանության լեզվով ուղերձները վիզուալիզացնելու հետ: Սոցիալիստական միջավայրերի մշակութային լանդշաֆտները, հատկապես արդյունաբերական քաղաքներում, մեկնաբանում էին տնտեսական առաջընթացը, նոր կյանքի հաղթանակը հնի նկատմամբ և նոր սոցիալական կարգի հաստատումը (Czepczyński 2008, 75):

Մշակութային լանդշաֆտում առանցքային կարևորություն էր տրվում հիշողության տարածքներին՝ թանգարաններին, հուշասրահներին, գրականության թանգարաններին, հուշարձաններին և այլն:

1978 թ. փետրվարի 1-ին արդյունաբերական Չարենցավան քաղաքում բացվում է Չարենցի հուշասրահը՝ որպես Եղիշե Չարենցի տուն-թանգարանի մասնաճյուղ:

Դեռևս 1947 թ. հիմնվում է Լուսավան անունով ավանը, որը Չարենցավան վերանվանվում է 1967 թ.՝ բանաստեղծ Ե. Չարենցի ծննդյան 70-ամյակի առթիվ: Լուսավանը հիմնադրվում է Գյումուշի հիդրոէլեկտրոկայանի կառուցման շրջանում, երբ անհրաժեշտ էր ներգրավել մեծաքանակ աշխատուժ «լույս» և էներգիա ստեղծող կառույցում աշխատելու համար: Ընդ որում Լուսավանը կառուցվում է ոչ թե գոյություն ունեցող բնակավայրի ընդլայնման կամ վերահիմնավորման սկզբունքով, ինչպես օրինակ Հայաստանի արդյունաբերական այլ քաղաքները,

* Ստացվել է 16.04.2023թ., ուղարկվել է գրախոսման 16.04.2023թ., ընդունվել է տպագրության 07.07.2023 թ.: Հոդվածի համար հիմք է ծառայել հեղինակի կողմից EU4Culture ծրագրի շրջանակներում 2022թ. Չարենցավան խոշորացված համայնքի մշակութային զարգացման ռազմավարություն կազմելու համար «Մշակույթը հանուն կայուն զարգացման» կազմակերպության իրականացրած հետազոտության համար իրականացված հարցազրույցները: Հոդվածում դրանք կհղվեն որպես Դաշտային ազգագրական նյութեր (ԴԱՆ):

այլ որպես միանգամայն նոր խորհրդային ավանգարդ նախագիծ, որը գիտական և արդյունաբերական նորարարության «լույսը» բերում էր մարդկանց կյանք: Այս խորհրդանշական կապերը հիմնավորվում էին նաև տեխնիկապես, երբ 1948 թ. Լուսավանը հիշատակվում է որպես շրջակայքում էլեկտրական լույս ունեցող միակ ավան: Հավանաբար էլեկտրաէներգիայի «լույսը» և արդիականացման լույսը տարածելու առաքելությամբ պայմանավորված Լուսավանի հիմնադիր-ճարտարապետ Տիրան Մարությանն այս ավանի հատակագծին տալիս է «Լուսավան» անվանումը (ԴԱՆ, 2022): Հիմնադրումից ի վեր որպես Գյումուշ ՀԷԿ-ի շինարարությունը սպասարկող ավան-տարածք ստեղծված Լուսավան-Չարենցավանը արագ զարգանում էր որպես արդյունաբերական քաղաք՝ ձևավորվելով որպես մեքենաշինական, գործիքաշինական և հաստոցաշինական արդյունաբերության հանգույց և այդպիսով իր արտադրանքի և դրա կիրառման շնորհիվ «տարածվելով» Հայաստանի և Խորհրդային Միության ողջ տարածքում: Չարենցավանը, ի տարբերություն Հայաստանի քաղաքների մեծ մասի, բնակեցվել է միայն հիմնադրման պահից՝ նորաբնակներով, ովքեր այստեղ էին եկել Հայաստանի տարբեր շրջաններից և հետագայում ձևավորել են բազմազանության ու նորարարության գաղափարներով հիմնված քաղաքը:

Խորհրդային արդյունաբերական այս նորաստեղծ քաղաքի մշակութայնացումը պետք է դառնար քաղաքայնացման հաջորդ քայլը, քանի որ գաղափարախոսությունը և ուրբանիզմը սերտ փոխկապակցված էին անգամ խորհրդային ամենափոքր քաղաքներում: Այս մոտեցումների շրջանակում արդյունաբերական արդիականացման այս տարածքի վերանվանումը բանաստեղծ Ե. Չարենցի անունով կապվում էր նաև Չարենցի՝ ներկայի արդիականացման և ապագայի զարգացման ստեղծագործությունների միտումներին: Հետագայում, Չարենցավանի մշակութային խորհրդանիշ համարվող «Գանգրահեր տղայի» արձանը ևս պետք է կապվեր Չարենցի «գալիքի տեսիլքին», ինչպես նկարագրված էր համանուն ստեղծագործությունում, քանի որ Չարենցի կյանքն ու գրական ստեղծագործությունները արդեն այս շրջանում «վերահարմարեցվել» էին խորհրդային գաղափարախոսությանը:

Արդիականացվող ուրբան միջավայրերի բովանդակայնացումը. Այս իրողությունների պայմաններում մեծ էր իշխանությունը մշակութային լանդշաֆտի նոր, տեսանելի ձևեր և իմաստներ տեղափոխելու ձգտումը, որը հատուկ էր խորհրդային քաղաքականությանը և առհասարակ տոտալիտար, ոչ դեմոկրատական միջավայրերին: Մշակութային միջավայրի խորհրդանիշները կոչված էին հիմնավորելու գաղափարախոսությունը և կիրառվող հիերարխիկ քաղաքականությունը. «Իրագործելով ՍՄԿԿ Կենտրոնական Կոմիտեի «Աշխատավորների կոմունիստական դաստիարակության գործում թանգարանների դերի բարձրացման մասին» (1964 թ.) որոշումը՝ հանրապետության թանգարանների աշխատողները հոգևոր և նյութական գանձերի միջոցով լուսաբանում են սովետական ժողովրդի դերն ու նշանակությունը մարդկության պատմության կերտման գործում, ցույց տալիս սովետական հասարակարգի զարգացման օրինաչափությունները, մեր երկրի ժողովուրդների անխախտ բարեկամությունը և փոխօգնությունը» («Կուլտուր-լուսավորական աշխատանք», 1979,№3, 2):

Արդեն 1967 թ. քաղաքը Չարենցավան վերանվանելով՝ խնդիր էր առաջանում բովանդակային կապեր ստեղծելու անվանման և միջավայրի միջև: Դեռևս 1964 թ. փետրվարի 8-ի ՀՍՍՀ Մինիստրների սովետի № 44 որոշմամբ կազմակերպվում է «սովետահայ խոշորագույն բանաստեղծ Եղիշե Չարենցի մեմորիալ բնակարան Երևանում քաղաքում, Լենինի պողոտայի[1] № 45 շենքում, որտեղ նախկինում ապրել է բանաստեղծը»: Հետագայում այս մեմորիալ բնակարանը վերածվում է տուն-թանգարանի: (Ներսիսյան, Դանեղյան 1975, 7–15):

Արդեն 1978 թ. Ե. Չարենցի 80-ամյակի առթիվ նրա անունը կրող արդյունաբերական քաղաքի մշակութային լանդշաֆտում բացվում է «Չարենցի հուշասրահ» անվամբ և կարգավիճակով առանձնացված տարածք՝ որպես Ե. Չարենցի երևանյան թանգարանի մասնաճյուղ: Հայաստանի Հանրապետության տարածքում այս երկու թանգարանային տարածքներն են, որ նախատեսված են Չարենցի ժառանգությունը ներկայացնելու համար: ԽՍՀՄ փլուզումից հետո մասնաճյուղը ինստիտուցիոնալ առումով կտրվում է «մայր» թանգարանից և հանձնվում համայնքային կառավարման: Ներկայում այն չունի որևէ իրավական կարգավիճակ և «Չարենցի հուշասրահ» անվանմամբ ներառված է Չարենցավան համայնքի Գառզուի անվան արվեստի դպրոցի հաստիքացուցակում:

Ժամանակակից Չարենցավանի խորհրդանիշ համարվող «Գանգրահեր տղայի» արձանը (Ծատուրյան, 2022, 7) դեռևս նախատեսված չէր և Ե. Չարենցի անունը կրող քաղաքի «չարենցայնացումը» սկսվում է Չարենցի հուշասրահից:

Սոցիալիստական հիերարխիկ տարածքներ. Հուշասրահը գտնվում է քաղաքային կենտրոնական զբոսայգում՝ առանձնացված միահարկ քարե կառույցի տարածքում: Ըստ տեղացիների՝ շենքը զբոսայգու կառուցվածքի մաս էր, որը որոշվում է հատկացնել հուշասրահին. «Էս շենքը եղել է զբոսայգու խաղասրահ, ցեմենտով պատերով խաղասրահ էր, հետո որ Չարենցի աղջիկները հավանեցին, իրենք որոշեցին որ սա մի գողտրիկ անկյուն է, որտեղ կարելի է գալ: Այնուհետև սկսվեց վերանորոգումը: Անձամբ Ավետիսյանն էր մասնակցում աշխատանքներին, քար ու ավազ կրում, նաև իրար հետ ենք մաքրել տուֆե պատերը, 3 հոգով էինք, ամեն մեկս մի գույնի տուֆ էինք ընտրել և դա էինք մաքրում, որ գույները պահպանվեն», – հիշում է հիմնադրման օրից հուշասրահում աշխատող Անահիտ Արտուշյանը:

«Չարենցավանի մշակույթի ու հանգստի քաղաքային զբոսայգին» (ճարտարապետ՝ Ռուբեն Շահմուրադյան), որտեղ գտնվում է հուշասրահը, քաղաքի մշակութային լանդշաֆտի առանցքային տարածքներից է: Զբոսայգին հիմնադրվել է Չարենցավանի 1972–1987 թթ. քաղխորհրդի գործկոմի նախագահ Վլադիմիր Ավետիսյանի կողմից:

Նրա կառավարման տարիներին, որոնք համընկել էին ուշ սոցիալիզմի (Юрчак 2014, 23) խորհրդային «լճացման»՝ ըստ Գորբաչովի (Горбачев 1987) կամ ըստ որոշ հետազոտողների՝ «սովետական ոսկե դարի» (Boele 2011. Bacon 2002) տարիներին, ձևավորվել է քաղաքի մշակութային լանդշաֆտը՝ Չարենցի հու-

1 Ներկայիս Մաշտոցի պողոտան:

շասրահը, Գանգրահեր տղայի արձանը, երաժշտական դպրոցը և այլն: Մինչ օրս հուշասրահի բակում կանգուն է Վլ. Ավետիսյանի տնկած բարդին: Չարենցավանի քաղաքային զբոսայգին խորհրդային ինդուստրիալ քաղաքի առանցքային քաղաքային տարածքներից էր, որտեղ մանկական ատրակցիոնները, խորհրդային քաղաքային պլանավորման բաղադրիչ շատրվանները, եղևնիների ծառուղիները, խնամված գազոնները, ծաղկաթմբերը ԽՍՀՄ փլուզումից 30 տարի անց նաև, ըստ մեր հետազոտության արդյունքների, քաղաքացիների նոստալգիկ հիշողության առանցքային կետերից են: Իրականացված առցանց հարցման[2] տվյալներով հարցման մասնակիցների 43 %-ի կարծիքով զբոսայգին քաղաքի մշակութային «առաջնային դրական վայրերից է» և անցյալի միջավայրաստեղծ կարևոր տարածքներից:

Չարենցավանի քաղաքային զբոսայգին կարծես կամրջում էր քաղաքի արդյունաբերական և բնակելի հատվածները՝ ստեղծելով նոր քաղաքի «սրբազան» տարածքը կամ կենտրոնը: Առհասարակ, խորհրդային մշակութային քաղաքականության մոտեցումներով բնակավայրերի նախկին «սրբազան» կենտրոնները փոխարինվում էին նոր լուսավորության տարածքներով, որոնք նշագծվում էին պաշտոնական բյուրոկրատիայի ատրիբուտներով, ինչպես օրինակ եղևնիները (Շագոյան 2022, 7) և «լցվում» էին նոր գաղափարախոսության և նոր կյանքի խորհրդանիշներով, ինչպես օրինակ՝ արդյունաբերական ձեռնարկությունների հետ կապեր, հուշարձաններ, պաստառներ և այլն: Քաղաքների կենտրոնական զբոսայգիները դիտարկվում էին որպես վերափոխության տարածքներ՝ «մշակութային-քաղաքական կոմբինատներ» կամ «գիտակցության վերափոխման ֆաբրիկաներ», «կանաչ համալսարաններ», «սոցիալիստական մշակույթի տնկարաններ» (Воробьева, Рабинович 2022. Лунц 1934), որոնց խնդիրն էր վերամշակել «սովետական նոր քաղաքների բնակիչների բացասական բնութագրիչները և ստեղծել նոր, դրական ձևակերպված կուլտուրականություն» (Барышев 2016): Զբոսայգիներին այս իմաստով հատկացված էր բազմակի դեր. բացի քաղաքաստեղծ

2 #EU4Culture ծրագրի շրջանակներում Չարենցավան խոշորացված համայնքի մշակութային զարգացման ռազմավարություն կազմելու համար «Մշակույթը հանուն կայուն զարգացման» կազմակերպությունը անցկացրել է առցանց հետազոտություն: Քաղաքում տեղում անցկացվող ուսումնասիրությանը զուգահեռ թվանշանային գործիքով սոցիալական ցանցերի օգնությամբ անցկացված այս հետազոտության միջոցով խնդիր է դրվել պարզել մշակութային կյանքի խնդիրները, ստեղծարար մշակույթի ոլորտի մասին ընկալումները ու մշակութահեն զարգացման կարողությունները: Հարցաշարը առցանց տեղադրվել է «Մշակույթը հանուն կայուն զարգացման» կազմակերպության էջում 2022 թ. ապրիլի 5-ին (Հարցաշարը տես t.ly/bWbp: facebook սոցիալական կայքում գրառումը տես https://www.facebook.com/CULTforDEV/posts/1014461812533860): Չարենցավան համայնքում թիրախային գովազդի գործիքի կիրառմամբ հարցաշարը տարածվել է 29 անգամ, դրա մասին տեղեկություն տեսել է 10000 մարդ, որից 2750 ծանոթացել է տարածված գրառմանը, իսկ 1425 մարդ տեսել է հարցաշարի բովանդակությունը և հետազոտության նպատակը: 2022 թ. Ապրիլ – մայիսի ժամանակահատվածում Չարենցավան համայնքում ստեղծագործական արդյունաբերության և մշակութային ռազմավարության ներուժի բացահայտմանն ուղղված առցանց հետազոտությանը մասնակցել են 106 քաղաքացիներ: Հետազոտության հեղինակներ՝ Ռուզաննա Ծատուրյան, Համլետ Մելքումյան, Մխիթար Գաբրիելյան:

միջավայրից, որտեղ պետք է ծավալվեր բնակիչների գեղագիտական և հանրային դաստիարակությունը, այս տարածքներին վերապահված էր նաև մշակութային դաստիարակության դեր և ակնկալվում էր, որ քաղաքային զբոսայգիներում պետք է ծավալվեն մշակութային միջոցառումներ: Այս իմաստով Չարենցի հուշասրահի տեղակայումը լիովին տեղավորվում էր խորհրդային մշակութային քաղաքականության մոտեցումների մեջ՝ որպես անընդհատ կրթվելու տարածք:

Քաղաքայնացման և գաղափարախոսության կապը. Չարենցի հուշասրահը տարածքային առումով կամրջելով քաղաքի բնակելի և արդյունաբերական տարածքը, կից էր Չարենցավանի արդյունաբերական փառքն ապահովող կարևորագույն գործարաններից 1966 թ. հիմնադրված «Կենտրոնաձուլ» (1995 թ.-ից՝ Ձուլակենտրոն) գործարանին, որի հետ ուներ նաև ընդհանուր ենթակառուցվածքներ, ինչպես օրինակ ջեռուցման համակարգը: Խորհրդային պլանային տնտեսության և սոցիալիստական հիերարխիաների պայմաններում գործարանները հաճախ ստանձնում էին մշակութային կառույցների «շեֆությունը», ինչը պարտավորեցնում էր որոշակի կամավոր «մեկենասության» և ֆինանսական ներարկումներ մշակույթի ոլորտ, որը խորհրդային քաղաքականության ծիրում համարվում էր գաղափարախոսական ազդեցության ամենաառանցքային դաշտը: Չարենցի հուշասրահի տարածքը ևս բացառություն չէր. «Միջոցառումներ էին կազմակերպվում՝ հուշ-երեկոներ, քաղաքի երիտասարդ գրողների շնորհանդեսներ և գործարանների տնօրենները հովանավորում էին այս միջոցառումները՝ ապահովելով անհրաժեշտ նյութերի, ռեսուրսների առկայությունը» (ԴԱՆ, 2022):

Խորհրդային արդյունաբերական կենտրոնացված արտադրության և սպառման համակարգի փլուզումը ուղիղ փոխկապակցվածություն է առաջացնում նաև հուշասրահի աստիճանական քայքայման համար: Բացի ընդհանրական տնտեսական դժվարություններից, հուշասրահը ասես «պորտալարով» կապված էր գործարանին իր ջեռուցման համակարգով: Հետխորհրդային շրջանում գործարանի հզորությունների խիստ թուլացումը առաջացնում է նաև ջեռուցման նախկին համակարգերի աղճատում, արդյունքում՝ հուշասրահի տարածքը զրկվում է իրական և խորհրդանշական «ջերմությունից»՝ ջեռուցումից, որի և տանիքի քայքայման պատճառով աստիճանաբար շենքի պայմանները վնասվում են՝ առաջացնելով անընդհատ կաթոցներ և ջերմակարգավորման տատանումներ և հուշասրահի՝ մինչ օրս շարունակվող պարբերական վերանորոգման անհրաժեշտություն:

Տարածքի բովանդակայնացումը. Չարենցի հուշասրահի տեղն ընտրելուց հետո սկսվում է տարածքի՝ հուշասրահի համար նախապատրաստումը: Խորհրդային գաղափարախոսական արվեստի միտումներով պայմանավորված առանձնահատուկ կարևորվում է մուտքը՝ որպես սկիզբ և պատում: Մուտքը խորհրդային «ֆասադային» արվեստի տրամաբանությամբ պետք է հաղորդեր հիմնական առանցքային ուղերձները՝ հզորության, պայքարի, հաղթանակի և նոր կյանքի հաջողությունների մասին: Խորհրդային հեղափոխական գրողի՝ Չարենցի հուշասրահի մուտքը նույնպես պետք է ձևավորվեր այս տրամաբանությամբ:

Հուշասրահի մուտքը ձևավորվել էր երկու նշանային արվեստային ուղերձ պարունակող դրսևորումներով. մուտքից ձախ պատի վրա տեղադրված էր Ե. Չա-

րենցի դիմանկարով մետաղական պատկերաքանդակ որը հետագայում գողացվել է և այլևս չի գտնվել[3] և հուշասրահի մուտքի փայտե դուռը, որը ստեղծվել էր Ե. Չարենցի «Ամբոխները խելագարված» ստեղծագործության մոտիվներով[4]:

Չարենցավանի «չարենցայնացումը» պիտի դրսևորվեր նաև սովետական մոնումենտալ արվեստի ցուցադրությամբ: Չարենցի արձանը, որի հեղինակը Արա Շիրազն է, բառացի ծնունդ է առել Չարենցավանում՝ ձուլվելով Կենտրոնաձուլ գործարանում. «8 հատ ձուլեցին գիպսե նախատիպի նմուշով, դրանցից մեկը հաջող ստացվեց, այստեղ տեղադրեցին» (ԴԱՆ, 2022): Այն տեղադրվեց հուշասրահի մուտքի կողքին՝ ցածրադիր պատվանդանի վրա. «Քանդակը բրոնզաձույլ է և կանգնեցված է թանգարանի մասնաճյուղի՝ Չարենցավանի հուշասրահի բակում: Քանդակագործը գտել է մեծ բանաստեղծին բնորոշ այնպիսի հոգեբանական նրբերանգներ, որոնք բացահայտում են բանաստեղծին՝ մեկ հեգնող-հանգիստ, մեկ իմաստուն՝ մարդկանց լավն ու հերոսականը տեսնող, երբեմն նաև ներողամիտ՝ մարդկային թուլությունների հանդեպ» (Երզնկյան 1980, 12–13): Հետագայում քանդակը տեղափոխվել է և ներկայումս գտնվում է հուշասրահի հետնամասում՝ բարձր պատվանդանի վրա[5]. «Երեխաները բարձրանում են արձանի վրա, նստում, խաղում, այդ պատճառով էլ տեղափոխեցին ավելի բարձր պատվանդանի վրա» (ԴԱՆ, 2022): Չարենցի այս արձանը ներկայումս ներառված է ՀՀ Կոտայքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկում, որտեղ արձանի կառուցման թիվը նշված է 1987 թ.: Սակայն մեր հետազոտության արդյունքները՝ համադրված հրատարակված նյութի հետ ցույց են տալիս, որ արձանը պատրաստվել է Չարենցի հուշասրահի բացման առթիվ և տեղադրվել է 1978 թ. (Երզնկյան 1980, 12): Չարենցի արձանը չարենցյան այլ պատկերների հետ պետք է «լցնեին» նոր արդյունաբերական քաղաքը բովանդակությամբ՝ կապելով այն ապագայի քաղաքի Չարենցյան մոտեցման հետ:

Հուշասրահի բովանդակությունը. Չարենցի հուշասրահը, ձևավորվելով 1978 թ., իր մեջ միավորել է քաղաքի արդյունաբերական զարգացման, հուշասրահի բացման և Չարենցի՝ որպես զարգացման տեսլական ունեցող ստեղծագործողի կոնցեպտը: Հուշասրահի ցուցանմուշները ներկայացված են եղել հորիզոնական և ուղղահայաց ցուցափեղկերով՝ բաժանված լինելով թեմատիկ մասերի՝ Չարենցավան, Հուշասրահ, Չարենցի կյանք և ստեղծագործություն:

Չարենցավանի Չարենցի հուշասրահը մուտքից ձախ կողմի պատին կամրջում էր քաղաքի արդյունաբերությունը մշակութային նոր ձևավորվող բովանդակության հետ՝ ներկայացնելով տարբեր լուսանկարներ Չարենցավանի՝

3 1970 թ. Թերեզա Միրզոյանի և Սուրեն Նազարյանի կողմից ստեղծված Չարենցավանի մուտքի ցուցանակը, որի երկու երեսին պատկերված էին մեծադիր մետաղյա պատկերաքանդակներ, նույնպես գողացվել է և այլևս չի գտնվել (լուսանկարը տես Չարենցավան 2022):

4 Դուռը 2023 թ. ապրիլի դրությամբ պահպանված է, թեև ժամանակի ընթացքում դրանից ևս պոկվել են և գողացվել մետաղական որոշ մասեր:

5 Ցավալիորեն այգու վարձակալ կազմակերպությունը բարեկարգման նպատակներով ներկել է արձանը՝ խաթարելով դրա հեղինակային տեսքը (նկարը՝ 2023 թ. ապրիլ):

արդեն իսկ բուռն վերելք ապրող արդյունաբերական տարածքներից և աշխատանքային միջավայրերից: Ուրբան միջավայրի ներկայացման շարունակությունն էր հանդիսանում Չարենցի հուշասրահի բացմանը նվիրված մասը՝ ներկայացվելով հուշասրահի ցուցադրական նյութերում՝ մեծադիր լուսանկար բացօթյա բացման պաշտոնական արարողությունից, Չարենցի կիսանդրու մոտ ծաղիկներ դնելու արարողության վավերագրություն, բացման առթիվ Եվգենի Եվտուշենկոյի բանաստեղծության տեքստը: Ընդ որում Ե. Եվտուշենկոյի բանաստեղծությունը թարգմանվել է նաև հայերեն և ներկայումս էլ դպրոցական տարբեր միջոցառումների ժամանակ օգտագործվում է իբրև չարենցավանյան տեքստ.

В Чаренцаване

Речи с музыкой чередовали –
Лишь один не сказал свою речь
На открытии в Чаренцаване –
Ставший памятником – Чаренц.

И, наверно, бредя разбегом,
И печалясь, что стало ничьей,
Карусель – занесенная снегом,
Наблюдала помост для речей.

Карусель чуть была посторонней
Полуслушая, рядом с ней,
Ели мальчики прямо с ладоней
Пересыпанный солнцем снег.

Им хотелось толкаться, щипаться,
сесть у облака на крыле.
Чуть подталкивали их пальцы
Карусель, что примерзла к земле.

Карусели хотелось размаха.
Наша жизнь – испокон и досель -
То великая сцена, то плаха,
О примерзшая карусель.

Кто- выкидывает коленца,
Кто- подняться не может с колен.
Кто живет по примеру Чаренца:
выше всех каруселей и сцен.

Кровь за кровью, резня за резнею-
вот история этой земли.
Но не вянут цветы на землю
там, где в землю поэты легли.

Все во мне – от Гомера, Катулла,
Все в Армении – тоже мое.
Без армянской великой культуры
Человечество быть не могло.

Дай, Чаренц, на тебя опереться,
Чтоб увидеть библейский рассвет.
Без Армении нету Чаренца.
Без Чаренца Армении нет. (2 февраля, Ереван)

Հուշասրահի բացման արարողությունը ևս կազմակերպվում է մեծ հանդիսավորությամբ, ինչը հնարավորություն էր տալիս արդյունաբերական քաղաքը ներկայացնել նաև մշակութային բովանդակության տեսանկյունից: Հրավիրվում են ժողովրդական երգի պարի խմբեր, հայտնի գրողներ, կուսակցական գործիչներ, ինչը լրացուցիչ իմաստային լրջություն և կշիռ է հաղորդում նոր բացվող մշակութային տարածքին: Որպես Երևանի Ե. Չարենցի տուն-թանգարանի մասնաճյուղ՝ հուշասրահը համալրվում է ցուցադրական նյութերով, ինչպես օրինակ Ե. Չարենցի անձնական իրերը. «Այստեղ ցուցադրվում էին Չարենցի սուրճի բաժակները, մոխրամանը, սպասք, ժիլետը, գլխարկը, ձեռագիրը, պիանինոն էր դրված, Էդվարդ Ղազարյանի միկրոսկոպիկ արվեստի ցուցափեղկը, հետո, երբ թանգարանը հանձնվեց համայնքին, այդ բոլորը տարան հետ Երևանի մայր-թանգարան, քանի որ արդեն այստեղ անվտանգությունն էլ ապահով չէր (ԴԱՆ, Արտուշյան, 2022): Միաժամանակ ցուցադրությունը կամ այն, ինչին այսօր կարելի է հետևել, կառուցված էր ցուցափեղկերում Ե. Չարենցի անձնական իրերի և ստեղծագործական ուղին ներկայացնելու տրամաբանությամբ: Ընտանիքի, մանկության տարիների մեկնաբանությունը տրվում էր լուսանկարներով, անձնական փաստաթղթերի կրկնօրինակ նմուշներով: Առհասարակ, հուշասրահի այսօրվա ցուցանմուշները բացի նրանցից, որոնք վերադարձվել են Չարենցի տուն-թանգարան, որևէ վերաներկայացման չեն ենթարկվել: Հուշասրահի բացման ժամանակաշրջանի գաղափարախոսական մոտեցումներով պայմանավորված՝ Ե. Չարենցի կենսագրությունից ընդգծված էին նոր, սոցիալիստական կոմունիստական գաղափարախոսության և հատկապես հեղափոխությանը նվիրված ստեղծագործությունները, օրինակ՝ Չարենցի՝ Լենինին նվիրված տարբեր գործերի հրատարակությունների ստենդ, «ես եղա՛... առաջին նաիրյան իսկական Կարմիր բանակում» ստենդ և այլն, որոնք Չարենցյան «Լենինապատումի» հիմնավորումներն էին: Այս շրջանում խորհրդային մշակութային քաղաքականությունը շարունակում էր թանգարանային միջավայրերը դիտարկել որպես պրոպագանդայի տարածքներ՝ առաջարկելով կիրառել «ցուցադրական ագիտացիա՝ որպես գաղափարական աշխատանքի ձև» մոտեցումը մեծադիր նկարների և պաստառների միջոցով («Կուլտուր-լուսավորական աշխատանք», 1976, № 6, 3): Այս բովանդակության շուրջ, հետևելով պաշտոնական դիրեկտիվներին, ակտիվանում էին նաև գաղափարախոսական պրակտիկաները. «Մենք դպրոցների հետ կապ ունեինք, երբ որ նոր էր հուշասրահը բացվել, առաջին դասարանցիներին բերում էին թանգարան, երեխաները արտասանում էին «Ես իմ անուշ Հայաստանի», որպես օձում, նույնիսկ ներսում հոկտեմբերիկ էինք ընդունում, կրծքանշան հանձնում, պիոներ էինք ընդունում, եռուզեռը շատ էր» (ԴԱՆ, Արտուշյան, 2022): Հուշասրահը բացի ցուցանմուշներից, ձևավորված էր նաև արվեստային նմուշներով, որոնք կոչված էին լրացուցիչ ծավալ և ընդգրկում հաղորդել ինչպես Ե. Չարենցի ժառանգությանը, այնպես էլ հուշասրահի դիրքին՝ որպես նոր հիերարխիկ տարածք: Հուշասրահի պատերին ցուցադրված են Սարգիս Բաղդասարյանի «Եղիշե Չարենցի հուշարձանի» էսքիզը (1967 թ.), որի վերևում փակցված է Մարտիրոս Սարյանի «Եղիշե Չարենց» դիմանկարի կրկնօրինակը ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ Հենրիկ

Սիրավյանի կողմից արված, իսկ դիմահայաց պատին՝ Յուրի Պետրոսյանի «Ամբոխները խելագարված» (1977 թ.) կոփածոն (Ծատուրյան 2022)[6], որի դիմաց դրված է եղել Ե. Չարենցի դաշնամուրը: Այս բոլոր արվեստային ստեղծագործությունները և ցուցանմուշները հուշասրահի բացման ժամանակ տրամադրվել են Եղիշե Չարենցի տուն-թանգարանի կողմից: Հուշասրահի նախնական ձևավորումը՝ կատարված Յուրի Պետրոսյանի կողմից, չի պահպանվել: Հուշասրահի պատերին ևս իմաստային բեռ հաղորդելու նպատակով կատարվել են Չարենցի ստեղծագործություններից մեջբերումներ, որոնք ի դեպ պատրաստված են փայտյա տառերով՝ Եղիշե Չարենցի տուն-թանգարանի ձևավորող Կարսյանի կողմից:

Եզրակացություն

Մոտ 40000 բնակչություն ունեցող Չարենցավան խոշորացված համայնքում, որի մեջ ներառված են Չարենցավան, Ֆանտան, Կարենիս, Արզական, Բջնի, Ալափարս բնակավայրերը, Չարենցի հուշասրահը ըստ էության միակ թանգարանային միջավայրն է, որի դերը, ըստ հետազոտության արդյունքների, չի ներառված համայնքային զարգացման գործընթացում: Մինչդեռ, ըստ ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Քաղաքային մշակույթ և ժառանգություն» հայեցակարգի[7] ժամանակակից քաղաքների ճգնաժամը պահանջում է քաղաքային զարգացման նոր մոդել (Cities, Culture, Creativity 2021, 23): Սա իրողություն է, որ բնորոշ է աշխարհի բազմաթիվ երկրների մեծ ու փոքր քաղաքներին, սակայն այն ավելի սուր է դրսևորվում հատկապես ետխորհրդային, զարգացման բազմաթիվ հիմնախնդիրներ ունեցող քաղաքային միջավայրերում: Քաղաքի սոցիալական խոցելիության և շրջակա միջավայրի վնասման կանխումից բացի, այս նոր մոդելը միտված է «վերամարդկայնացնելու» քաղաքային միջավայրը թե՛ որպես ֆիզիկական տարածք, թե որպես պատկանելության զգացում ձևավորող միջավայր՝ մշակութային ինքնության տարածք:

Այսպիսով, Չարենցի հուշասրահը, հանդիսանալով նոր ձևավորվող խորհրդային արդիականացվող ուրբան միջավայրի մշակութային տարածք, շարունակում է իր գործունեությունը արդեն այլ իրողությունների պայմաններում: Հուշասրահի ներկան անցյալի «փառքի» ժամանակների կորստի ու մոռացումի միջավայր է, որը վերադիրքավորվելու և մշակութային տարածքի երբեմնի գաղափարախոսական խորհրդանիշները և ուղերձները վերաներկայացնելու միջոցով ներուժ ունի պատմելու խորհրդային արդյունաբերական քաղաքների ու մշակութային միջավայրերի ձևավորման խորհրդային քաղաքականության մասին:

---

6 Ըստ հուշասրահի գիտաշխատող Ա. Արտուշյանի՝ աշխատանքի աջ մասը կոչվում էր թռիչք, որին հեղինակը համալրել է ձախ մասը՝ թանգարանի բացման առթիվ և կոչել «Ամբոխները խելագարված»:

7 Շնորհակալություն եմ հայտնում Եղիշե Չարենցի տուն-թանգարանի ֆոնդապահ Անուշ Թասալյանին՝ ներկայացված ցուցանմուշների հեղինակների և ստեղծման տարեթվերի ճշգրտման հարցերում օգնելու համար:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Սկզբնաղբյուրներ

Դաշտային ազգագրական նյութեր, Ծատուրյան Ռ., չհրատարակված, Չարենցավան, 2022–2023:

ՀՀ Կառավարության որոշումը՝ ՀՀ Կոտայքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը հաստատելու մասին, 24 դեկտեմբերի 2003 թվական, № 1793-Ն (https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=11757):

Գրականություն

ԵՐԶՆԿՅԱՆ 1980 – Երզնկյան Մ., Եղիշե Չարենցի տուն-թանգարան. Ցուցահանդես՝ Չարենցը կերպարվեստում, «Կուլտուր-լուսավորական աշխատանք», 1980, № 3, էջ 9–13:

ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐԸ 1979 – Թանգարանների միջազգային օրը, Խմբագրական, «Կուլտուր-լուսավորական աշխատանք», 1979, № 3, էջ 1–3:

ԾԱՏՈՒՐՅԱՆ 2022 – Ծատուրյան Ռ., Չարենցավան. Խորհրդային և հետխորհրդային հիշողության տարածքներ, պատկերագիրք, Երևան, 2022:

ՆԵՐՍԻՍՅԱՆ, ԴԱՆԵՂՅԱՆ 1975 – Ներսիսյան Ռ., Դանեղյան Է., Թանգարանը բացում է իր դռները, «Կուլտուր-լուսավորական աշխատանք», 1975, № 1, էջ 7–15:

ՉԱՐԵՆՑԱՎԱՆ 2022 – Չարենցավան. խորհրդային և հետխորհրդային հիշողության տարածքներ ալբոմ, Երևան, 2022:

ՇԱԳՈՅԱՆ 2022 – Շագոյան Գ, Հիշողության լանդշաֆտը որպես պատմության դասավանդման հասկացություն և գործիք, 2022 թ. Հիշողության-լանդշաֆտը.pdf (hazarashen.am) (13.04.2023–7:22):

БАРЫШЕВА 2016 – Барышева Е. В., «Фабрика переделки сознания»: символика советских парков культуры и отдыха в репрезентации власти 1920–1930-х гг., Известия УрФУ, Серия 2, Гуманитарные науки, Екатеринбург, 2016, Том 18, № 1 (148), сс. 9–25.

ВОРОБЬЕВА, РАБИНОВИЧ 2022 – Воробьева М., Рабинович Е., Советские парки культуры и отдыха как проект 1930-х гг.: столичные образцы и провинциальные практики, Известия УрФУ, Серия 1, Проблемы образования, науки и культуры, Екатеринбург, 2022, Том 28, № 4, сс. 131–141.

ГОРБАЧЕВ 1987 – Горбачев М. С., Политический доклад центрального комитета КПСС XXVII съезду коммунистической партии Советского Союза, Избранные речи и статьи. Том 3, Москва, 1987,

ЛУНЦ 1934 – Лунц Л., Парки культуры и отдыха // Архитектура СССР, 1934. № 5. с. 20–29.

ЮРЧАК 2014 – Юрчак А., Это было навсегда, пока не кончилось. Последнее советское поколение / Алексей Юрчак; предисл. А. Беляева; пер. с англ., Москва, 2014,

BOELE 2011 – Boele O., Remembering Brezhnev in the New Millennium: Post-Soviet Nostalgia and Local Identity in the City of Novorossiisk, The Soviet and Post-Soviet Review, University of Utah, Salt Lake City, 2011, № 38 (1), pp. 3–29.

CITIES, CULTURE, CREATIVITY2021 – Leveraging culture and creativity for sustainable urban development and inclusive growth, UNESCO and INTERNATIONAL BANK FOR RECONSTRUCTION AND DEVELOPMENT/THE WORLD BANK, 2021.

CZEPCZYŃSKI 2008 – Czepczynski M., Cultural Landscapes of Post-socialist Cities: Representation of Powers and Needs, London, 2008.

Рузанна Цатурян
Институт археологии и этнографии НАН РА
ruzantsaturyan@yahoo.com

МЕМОРИАЛЬНЫЙ ЗАЛ ЧАРЕНЦА В ЧАРЕНЦАВАНЕ: ИДЕОЛОГИЯ И УРБАНИЗМ В СОВЕТСКОМ ГОРОДЕ

Ключевые слова: Чаренцаван, Чаренц, советская культура, память, культурная политика, урбанистика, муниципальный музей.

Культурный ландшафт – это метафорический язык, посредством которого выражаются власть, надежды и ожидания. Особенно в идеологических и недемократических системах все это связано с идеями власти и визуализацией сообщений на языке власти. Мемориальный зал Чаренца, открытый в 1978 году в Чаренцаване, промышленном городе Советской Армении, отразил тесную связь культурного ландшафта советского города с урбанизмом и идеологией. Это выражалось как в выборе места мемориального зала, внешнем и внутреннем оформлении, так и в содержании. Сегодня мемориальный зал функционирует как своего рода среда «забвения «славы» прошлого. В случае репрезентации эти составляющие культурного ландшафта имеют огромный потенциал репрезентировать нарративы советского культурного ландшафта и политики.

Ruzanna Tsaturyan
Institute of Archaeology and Ethnography National Academy of Sciences RA
ruzantsaturyan@yahoo.com

CHARENTS MEMORIAL HALL IN CHARENTSAVAN: IDEOLOGY AND URBANISM IN A SOVIET CITY

Keywords: Charentsavan, Charents, Soviet culture, memory, cultural policy, urbanism, community museum.

The cultural landscape is a metaphorical language through which power, hopes and expectations are expressed. Especially in ideological and non-democratic environments, these environments are associated with ideas of power and the visualization of messages in the language of power. The Charents Memorial Hall, opened in 1978 in Charentsavan, the industrial city of Soviet Armenia, reflected the close connection of the cultural landscape of the Soviet city with urbanism and ideology. This was expressed both in the choice of the place of the memorial hall, the external and internal design, and in the content. Today, the memorial hall functions as a medium for forgetting the “glory” of the past. When represented, these places have great potential to represent the narratives of the Soviet cultural landscape and politics.

Ռուզաննա Ծատրյան

Չարենցի հուշասրահը Չարենցավանում. Գաղափարախոսությունը և ուրբանիզմը խորհրդային քաղաքում

Նկ.1. Չարենցի հուշասրահի մուտքը Չարենցավանի քաղաքային զբոսայգու փարածքում:

Նկ.2. Չարենցի հուշասրահի ցուցադրական սրահ:

Նկ.3. Հուշասրահի բացման միջոցառում, 1978թ:

Նկ. 4. Հուշասրահի բացման բացօթյա միջոցառում, 1978թ.:

Նկ. 5. Ե. Չարենցի՝ Լենինին նվիրված ստեղծագործությունների ցուցադրական ստենդ, Չարենցի հուշասրահ, 2023թ:

Նկ. 6. Ե. Չարենցի երիտասարդությանը նվիրված ցուցադրական ստենդ, Չարենցի հուշասրահ, 2023թ:

Նկ. 7. Մ. Սարյանի «Եղիշե Չարենցի դիմանկարը» կտավի կրկնօրինակ՝ ըստ Հ. Միրավյանի, Ս. Բաղդասարյան, Ե. Չարենցի հուշարձանի էսքիզ, Չարենցի հուշասրահ:

Նկ. 8. «Ամբոխները խելագարված» կոփածո, Յու. Պետրոսյան, Չարենցի հուշասրահ:

Նկ. 9. Չարենցի հուշասրահի դռները՝ «Ամբոխները խելագարված» պոեմի սյուժեային հորինվածքով:

Նկ. 10. Ե. Չարենցի արձան, քանդակագործ՝ Ա. Շիրազ, 1978թ., Չարենցավանի քաղաքային զբոսայգի, նկարը՝ 2022թ: